

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՀԱՄԱՐԸ \_\_\_\_\_

**ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES, IHSS) ԾՐԱԳԻՐ  
ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱՐՎԱԹՎԱ ԵՎ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

*(Պետք է ստորագրվի այն մատակարարողի կողմից, որը հաստատված ծառայություններ է տրամադրում մի քանի ստացողներին)*

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԱՆՈՒՆԸ՝

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՀԱՄԱՐԸ՝

**ՄԱՍ Ա. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱՐՎԱԹՎԱ ԳՐԱՖԻԿԸ**

**ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ.**

- Նահանգային օրենքը (Վելֆերի և հաստատությունների կողի մաս 12300.4) սահմանափակում է IHSS և Հրաժարման անձնական ինսամքի ծառայությունների (Waiver Personal Care Services, WPCS) ծրագրերի մատակարարներողին աշխատել առավելագույն շաբաթական ժամերը՝ տրամադրելով IHSS և WPCS: Մատակարարողը, որը աշխատում է մի քանի ստացողների համար կարող է տրամադրել միայն 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում:
- Առավելագույն շաբաթական աշխատանքային շաբաթը չի ներառում ճամփորդության ժամանակը, ինչպես բացատրվում է այս ձևի Մաս B-ում: Աշխատանքային շաբաթը սկսում է կիրակի 12:00 a.m.-ից (կեսգիշեր) ու ավարտվում է 11:59 pm-ին հաջորդ շաբաթ օրը:
- Ստացողների համար ծառայությունները հաստատվում են ամսական հիմունքով, և նահանգային օրենքի համաձայն, նրանք սահմանափակվում են ստանալու այդ ծառայությունների որոշակի քանակ շաբաթական հիմունքով: Դուք ծանուցում կստանաք՝ տեղեկացնելով ձեզ, թե որքան հաստատված ծառայության ժամեր է ստանում ձեր ստացողներից յուրաքանչյուրը շաբաթական ու ամսական: Դուք երբեք չեք կարող աշխատել ավելի շատ, քանի ստացողի ամսական հաստատված ժամերն են այդ ստացողի համար: Սակայն, որոշ դեպքերում դուք կարող եք աշխատել ավելի շատ, քան ստացողի շաբաթական հաստատված ժամերն են: Ստացողը կարող է փոփոխել իր շաբաթական հաստատված ժամերը, սակայն նա պետք է ստանա վարչաշրջանի հավանությունն այն դեպքում, եթե փոփոխությունը կնշանակի, որ կամ մատակարարողը պետք է ավելի շատ արտաժամյա աշխատի մեկ ամսում, քան նա սովորաբար աշխատում է, կամ աշխատել իր համար շաբաթական 40 ժամից ավել (այն դեպքում, երբ իր համար հաստատվել է ծառայությունների 40 ժամ կամ ավելի քիչ աշխատանքային շաբաթում):
- Ձեր՝ որպես մատակարարողի պատասխանատվությունն է.
  - Հավաստիանալ, որ ձեր աշխատած ընդհանուր միասնական ժամերը, որոնց ընթացքում դուք ծառայություններ եք մատուցում բոլոր ստացողներին մեկ աշխատանքային շաբաթում, չեն գերազանցում 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում:
  - Հավաստիանալ, որ ձեր աշխատած ժամերը, որոնց ընթացքում դուք ծառայություններ եք մատուցում ձեր ստացողներից որևէ մեկին, չեն գերազանցում այդ ստացողի շաբաթական հաստատված ժամերը, եթե իհարկե ժամերը ճիշտ փոփոխված չեն:

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՀԱՄԱՐԸ \_\_\_\_\_

- Հավաստիանալ, որ եթե ձեր ստացողներից մեկը փոփոխում է իր շաբաթական հաստատված ժամերն այնպես, որ դուք սովորական հաստատվածից ավել եք աշխատում, ապա այդ դեպքում դուք պետք է նախորդ կամ հաջորդ շաբաթ աշխատեք ավելի քիչ ժամեր՝ համոզվելու համար, որ չեք գերազանցում նրա հաստատված ամսական ժամերը կամ սովորականից շատ արտաժամյա չեք չաշխատում մեկ ամսում:
- Եթե դուք ներկայացնեք ժամանակացույց, որում դուք խախտում եք աշխատանքային շաբաթվա գրաֆիկը հետևյալ որևէ ձևերով, դուք խախտում կստանաք.
  - Դուք աշխատում եք շաբաթական 40 ժամից ավել՝ առանց վարչաշրջանի հավանության ստացողին, եթե նրա համար հաստատվել է շաբաթական 40 ժամ կամ ավելի քիչ:
  - Դուք աշխատում եք ավելի շատ ժամեր ստացողի համար, քան նրա հաստատված ժամերն աշխատանքային շաբաթում՝ առանց վարչաշրջանի հավանության, և դրա հետևանքով դուք ավելի շատ արտաժամյա աշխատանք եք կատարում ամսվա ընթացքում, քան սովորաբար կանեիք,
  - Դուք աշխատում եք մի քանի ստացողների համար, ու աշխատում եք ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում,
  - Դուք հայցում եք շաբաթական յոթ ժամից ավել ճամփորդության ժամանակի համար (տես սույն պայմանագրի Մաս B-ն):
- Եթե դուք խախտեք աշխատանքային շաբաթվա գրաֆիկը վերոնշյալ որևէ ձևով, ձեզ սպասվում է հետևյալը՝

Առաջին խախտում	<ul style="list-style-type: none"> <li>• Դուք և ձեր ստացող(ներ)ը կստանանք խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ:</li> </ul>
Երկրորդ խախտում	<ul style="list-style-type: none"> <li>• Ձեր ստացող(ներ)ը և դուք կստանանք խախտման մասին ծանուցում, և դուք կարող եք անցնել մեկանգամյա ուսուցում աշխատանքային շաբաթվա ու ճամփորդության ժամանակի սահմանափակումների մասին: Եթե որոշում եք անցնել այս ուսուցումը, դուք չեք ստանա երկրորդ խախտումը:</li> <li>• Եթե որոշեք չանցնել ուսուցումն ծանուցման ամսաթվից 14 օրացուցային օրվա ընթացքում, դուք կստանանք երկրորդ խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ:</li> </ul>
Երրորդ խախտում	<ul style="list-style-type: none"> <li>• Դուք և ձեր ստացող(ներ)ը կստանանք երրորդ խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ:</li> <li>• Դուք կհեռացվեք IHSS ծրագրի IHSS մատակարարողի աշխատանքից երեք ամսով:</li> </ul>
Չորրորդ խախտում	<ul style="list-style-type: none"> <li>• Դուք և ձեր ստացող(ներ)ը կստանանք չորրորդ խախտման մասին ծանուցում և բողոքարկելու իրավունքների մասին տեղեկություններ:</li> <li>• Դուք կազատվեք IHSS ծրագրի IHSS մատակարարողի աշխատանքից մեկ տարով:</li> </ul>

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՀԱՄԱՐԸ \_\_\_\_\_

**ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.** դուք պետք է լրացնեք ստորև գտնվող աղյուսակը, որը կօգնի ձեզ կազմել ձեր աշխատանքային շաբաթվա գրաֆիկը: Ձեր գրաֆիկը պետք է ներառի ծառայությունները, որոնք դուք տրամադրում եք բոլոր ստացողներին, որոնց համար դուք աշխատում եք, և չպետք է գերազանցի շաբաթական 66 ժամ: Ձեր յուրաքանչյուր ստացողի ընդհանուր առավելագույն շաբաթական ժամերի մասին ձեզ կտեղեկացնի Ծանուցումը մատակարարողին ստացողի հաստատված ժամերի և ծառայությունների վերաբերյալ (ձև SOC 2271):

1. Սյունակ A-ում գրեք յուրաքանչյուր ստացողի **անունը**, ում դուք հաստատված IHSS ծառայություններ եք տրամադրում:
2. Սյունակ B-ում գրեք Սյունակ A-ում նշված յուրաքանչյուր ստացողի **գործի համարը**:
3. Սյունակ C-ում գրեք Սյունակ A-ում նշված յուրաքանչյուր ստացողի **հասցեն**:
4. Սյունակ D-ում գրեք յուրաքանչյուր օրվա ընդհանուր ժամերը (շաբաթվա յուրաքանչյուր օրվա համար), որի ընթացքում դուք աշխատում եք կամ պլանավորում եք աշխատել՝ հաստատված IHSS ծառայություններ տրամադրելով Սյունակ A-ում նշված յուրաքանչյուր ստացողին:
5. Սյունակ E-ում գումարեք յուրաքանչյուր օրվա ընդհանուր ժամերը Սյունակ D-ից, որի ընթացքում դուք աշխատում եք կամ պլանավորում եք աշխատել՝ հաստատված IHSS ծառայություններ տրամադրելով Սյունակ A-ում նշված յուրաքանչյուր ստացողին, և գրեք շաբաթվա համար նախատեսված ընդհանուր ժամերը Սյունակ E-ում նշված յուրաքանչյուր ստացողի համար:
6. Սյունակ E-ի ներքևի մասում գումարեք ընդհանուր ժամերի քանակը, որոնց ընթացքում դուք աշխատում եք կամ պլանավորում եք աշխատել՝ հաստատված IHSS տրամադրելով ձեր բոլոր ստացողներին յուրաքանչյուր շաբաթ:

A	B	C			D							E
Ստացողի անունը	Ստացողի գործի #	Ստացողի հասցեն			Իմ աշխատած կամ աշխատելու համար պլանավորված ընդհանուր ժամերի քանակը							Ընդհանուր ժամերը
		Փողոցի հասցեն	Քաղաք	Փոստային կոդ	Կիր.	Երկ.	Երբ.	Չմե.	Հնգ.	Ուրբ.	Շբթ.	

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՄԵՐԸ, ՈՐՈՆՑ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՄ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՄ ԿԱՄ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՄ ԱՇԽԱՏԵԼ՝ ՏՐԱՄԱԴԴԵԼՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈԼՈՐ ԱՏԱՑՈՂՆԵՐԻՆ՝

**ՄԱՍ Բ. ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ**

**ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ.**

- Եթե դուք ճամփորդում եք մեկ ստացողի գտնվելու վայրից դեպի մյուս ստացողի վայրը նույն աշխատանքային օրվա ընթացքում, որպեսզի երկուսին էլ տրամադրեք IHSS ծառայություններ, դուք կարող եք վարձատրվել այդ ճամփորդության ժամանակի համար, բայց այդ ժամանակը չի կարող գերազանցել շաբաթական յոթ ժամ: Այս յոթ ժամն ի լրումն են 66 ժամի:
- Այդ ճամփորդության ժամանակի համար վարձատրվելու համար դուք պետք է գնաք մեկ ստացողից դեպի մյուսը՝ առանց որևէ տեղ կանգ առնելու: Եթե դուք կարճատև կանգ եք առնում երկրորդ ստացողի մոտ գնալիս, օրինակ՝ բենզին լցնելու համար, համարվում է, որ դուք չեք շեղվել ճանապարհից: Սակայն եթե դուք կանգ եք առնում ինչ-որ անձնական գործեր անելու համար կամ վերադառնում եք ձեր տուն, դուք կարող եք վճարվել միայն այն ժամանակահատվածի համար, որը կպահանջվեր ծախսել ծառայությունների մատուցման մեկ տեղից մյուսը գնալու համար՝ առանց անձնական գործերի նպատակով կատարած կանգառների:
- Եթե ձեր ընդհանուր հաշվարկված շաբաթական ճամփորդության ժամանակը գերազանցում է յոթ ժամը, ապա ձեզ անհրաժեշտ կլինի փոփոխել ձեր աշխատանքային գրաֆիկն այնպես, որ ձեր ճամփորդության ժամանակը չգերազանցի յոթ ժամը:

**Դուք պլանավորում եք ճամփորդել մեկ վայրից, որտեղ դուք հաստատված ծառայություններ եք տրամադրում դեպի հաստատված ծառայությունների մյուս ստացողի վայրը նույն օրը:**

ԱՅՈ  ՈՉ

*Եթե դուք պատասխանել եք ՈՉ, դուք կարիք չունեք լրացնել ՄԱՍ B-ն, միանգամից անցեք ՄԱՍ C-ին:*

ՄԱՍ B-ի ՑՈՒՑՈՒՄՆԵՐ: Դուք պետք է լրացնեք այս հատվածը, ինչը կօգնի ձեզ պլանավորել ձեր ճամփորդության ժամանակը, որի համար դուք կվճարվեք, և պետք է, որ ձեր ընդհանուր շաբաթական ճամփորդության ժամանակը չգերազանցի 7 ժամը: Քանի որ դուք ճամփորդում եք, ձեզ կարող է անհրաժեշտ լինել ժամանակի և անցած մղոնների մասին ապացույց ներկայացնել:

1. Սյունակ A-ում ներքևում գրեք այն ստացող(ներ)ի անուն(ներ)ը, ում մոտից դուք գալիս եք:
2. Սյունակ B-ում ներքևում գրեք այն ստացող(ներ)ի անուն(ներ)ը, ում մոտ դուք գնում եք:

## ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՀԱՄԱՐԸ \_\_\_\_\_

3. Սյունակ C-ում ներքևում գրեք՝ ինչ տարածություն (մղոններով) պետք է անցնեք անմիջապես մեկ ստացողից դեպի մյուսը հասնելու համար:
4. Սյունակ D-ում ներքևում գրեք՝ ինչքան ժամանակ (րոպեներով) ձեր հաշվարկով կպահանջվի անմիջապես մեկ ստացողից դեպի մյուսը հասնելու համար:
5. Սյունակ E-ում ներքևում գրեք՝ քանի աշխատանքային օր եք պլանավորում յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում գնալ մեկ ստացողից դեպի մյուսը նույն օրվա ընթացքում:
6. Սյունակ F-ում բազմապատկեք այն հաշվարկված ժամաքանակը, որը ձեզ կպահանջվի մեկ ստացողից դեպի մյուսը գնալու համար (Սյունակ D) այն օրերի թվով, երբ դուք կճամփորդեք երկու ստացողների միջև յուրաքանչյուր շաբաթ (Սյունակ E), որ նշեք ձեր ընդհանուր ճամփորդության ժամանակը երկու ստացողների միջև (Սյունակներ A ու B):
7. Գումարեք Սյունակ F-ում նշված ամբողջ ժամանակը և գրեք արդյունքը Սյունակ F-ի ներքևի մասում:

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՀԱՄԱՐԸ \_\_\_\_\_

**ՄԱՍ Բ. ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ**

A	B	C	D	E	F
Ստացողների անունները, ում միջև դուք ճամփորդելու եք		Տարածությունը ստացողների գտնվելու վայրերի միջև (մղոններով)	Ստացողների գտնվելու վայրերի միջև ճամփորդելու մոտավոր ժամանակը (րոպեներով)	Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում օրերի քանակը, երբ դուք ճամփորդելու եք ստացողների գտնվելու վայրերի միջև	Ստացողների գտնվելու վայրերի միջև ճամփորդելու ընդհանուր մոտավոր ժամանակը յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում (Սյունակ D x Սյունակ E)
Ում մոտից	Ում մոտ				
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՈՒՄ՝					

Ինչպե՞ս եք ճամփորդելու ստացողների գտնվելու վայրերի միջև:

- ՄԵՔԵՆԱՅՈՎ\*     
  ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ     
  ԱՅԼ Նշեք՝ \_\_\_\_\_

**\* Եթե դուք ինքներդ եք մեքենա վարելու ստացողների միջև ճամփորդության ընթացքում, դուք պետք է ունենաք Կալիֆորնիայի վավեր վարորդական իրավունք և ապահովագրության փաստաթուղթ, իսկ ձեր մեքենան պետք է գրանցված լինի: Եթե դուք չունեք Կալիֆորնիայի վավեր վարորդական իրավունք և ապահովագրության փաստաթուղթ կամ մեքենայի գրանցում, ձեզ օրենքով չի թույլատրվում մեքենա վարել IHSS ծառայություններ տրամադրելու նպատակով: Դուք պետք է ընտրեք այլ փոխադրամիջոց, ինչպես օրինակ՝ հանրային տրանսպորտ: Եթե դուք նախընտրում եք ինքներդ մեքենա վարել, բայց ձեր վարորդական օրինական իրավունքի կարգավիճակը բացասականորեն է փոխվել (օրինակ՝ ձեր Կալիֆորնիայի վարորդական իրավունքի, մեքենայի ապահովագրության կամ մեքենայի գրանցման ժամկետը անցել է կամ այլևս վավեր չէ), ապա դուք պետք է տեղեկացնեք վարչաշրջանին և ընտրեք այլ փոխադրամիջոց: Եթե դուք չեք տեղեկացնում վարչաշրջանին այս կարգավիճակի փոփոխության մասին, ձեզ կարող են համարել IHSS ծրագրի պահանջների խախտող և ձեր ծառայությունները կարող են դադարեցվել:**

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՀԱՄԱՐԸ \_\_\_\_\_

**ՄԱՍ Ը. ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**Ես հայտարարում եմ, որ կարդացել և հասկացել եմ սույն փաստաթղթում նշված պահանջները և համաձայն եմ ենթարկվել այդ պահանջներին: Ես նաև հայտարարում եմ, որ բոլոր տվյալները, որոնք ես տրամադրել եմ այս ձևաթղթում, ճիշտ են և ստույգ, որքանով ինձ հայտնի է:** Ես համաձայն եմ տեղեկացնել վարչաշրջանին 10 օրացուցային օրերի ընթացքում, եթե փոփոխվի տեղեկություններից որևէ մեկը, որի մասին ես նշել եմ Մատակարարողի աշխատանքային շաբաթվա և ճամփորդության ժամանակի պայմանագրի մեջ, և կախված այն բանից, թե ինչ տեղեկություններ են փոխվել, ինձանից կարող է պահանջվել լրացնել նոր SOC 2255:

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

ԱՄՍԱԹԻՎ՝

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԱՆՈՒՆԸ ՏՊԱՏԱՌԵՐՈՎ՝

**ՄԻԱՅՆ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ (FOR COUNTY USE ONLY)**

WORKER NAME:

DATE:

ESTIMATED TRAVEL TIME REVIEWED:

SOURCE USED TO VERIFY TRAVEL TIME:

YES  NO 

NOTES: